

Առաջադրանքների օրինակներ

Նմուշ 1

Դպրոցամերձ այգում աշխատելիս դասղեկը Մանեին և Դավիթին խնդրեց դատարկել ջրով լցված գլանաձև տակառը: Մանեն դուլլով դատարկեց տակառի առաջին կեսը, իսկ Դավիթը՝ մյուս կեսը:

Ա. Ի՞նչ կարելի է պնդել նրանց կատարած մեխանիկական աշխատանքների վերաբերյալ:

- 1 Մանեն կատարեց ավելի շատ աշխատանք:
- 2 Դավիթը կատարեց ավելի շատ աշխատանք:
- 3 Մանեն և Դավիթը կատարեցին միմյանց հավասար աշխատանք:
- 4 Մանեն և Դավիթը մեխանիկական աշխատանք չկատարեցին:

Բ. Ի՞նչ երկու ֆիզիկական մեծություններից է կախված մեխանիկական աշխատանքը:

Պատասխան՝ _____ և _____

Նմուշ 2

Ձսպանակից բեռ է կախված: Արան բեռի վրա ազդող ուժերը գրել էր գրատախտակի վրա:

- | |
|---|
| 1. Ծանրության ուժ
2. Առաձգականության ուժ |
|---|

Հասմիկն ասաց, որ Արան մոռացել է գրել բեռի վրա ազդող ևս մեկ ուժ, որը հաճախ անտեսում են:

Ա. Ո՞ր ուժը նկատի ունենալիք:

Պատասխան՝ _____

Բ. Ի՞նչո՞ւ են այդ ուժը հաճախ անտեսում:

Պատասխան՝ _____

Նմուշ 3

Վանդակում ծածկագրված է հույն գիտնականի անունը, որը դեռևս մ. թ. ա. 3-րդ դարում ձևակերպել է լծակի կանոնը:

Ո՞ր գիտնականի անունն է ծածկագրված:

Պատասխան՝ _____

Նմուշ 4.

Այդուսակում տրված են ռեակցիաների հավասարումները և դրանց տեսակները: Եթե տվյալ ռեակցիայի հավասարմանը բնորոշ է տվյալ տեսակը, ապա համապատասխան վանդակում դի՛ր X նշանը:

Առաջին տողը լրացված է քեզ օգնելու համար:

	միացման	քայքայման	փոխանակման	տեղակալման
$H_2O + SO_3 = H_2SO_4$	X			
$2KOH + H_2SO_3 = K_2SO_3 + 2H_2O$				
$CaCO_3 = CO_2 + CaO$				
$Zn + 2HCl = ZnCl_2 + H_2$				
$H_2 + Cl_2 = 2HCl$				

Նմուշ 5


Վանդակում ծածկագրված է այն քիմիական տարրի անվանումը, որը գերակշռում է մարդու օրգանիզմում (ատոմների տոկոսներով), իսկ Երկրի կեղևում չնչին է:

Ո՞ր տարրի անունն է ծածկագրված:

Պատասխան՝ _____

Նմուշ 6

Քիմիական լաբորատորիայում սեղանի վրա դրված էր ինչ-որ նյութի բյուրեղավանդակի մանրակերտը:



Ա. Ո՞ր նյութին է այն համապատասխանում:

- 1 գրաֆիտ
- 2 CO_2
- 3 ալմաստ
- 4 J_2